[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
27	Հուլիս	2018 թ.		U	7818611609
[4] Մատակարարման ամսաթիվ					
27	Հուլիս	2018 թ.		Ճշգրտվող հաշվի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 9 4 0 7 9 8 8
[9] Անվանումը	ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐԶ. ԴԻՍՊ. Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 9 4 0 7 9 8 8 / 1
[11] Բանկային տվյալները	ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մ/մ N 16022457801500
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՍՅՈՒՆԻՔ ՎԱՊԱՆ ՎԱՊԱՆ Բաղաբերդի 48
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի	
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՆՁԱՎԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձարանական վարչություն N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	
[20] Ռում միջոցով	Անուն, ազգանուն
	Նիագրագիր: Համար
	Ամսաթիվ

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակը)	Միավորի գինը	Ցեղը(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Թիվ 90551618 քր. գործավ դուռաահագերաժական փոդնաքանություն	դեպ ր	1	32833		32833	20	6566.6	39399.6
Ընդամենը						32833	X	6566.6	39399.6

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 6711590040
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

27/07/2018 15:04:55

ՈՐՈՇՈՒՄ
ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.05.2018թ. ք.Կապան

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնի քննիչ, երկրորդ դասի խորհրդական Մ.Հովհաննիսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 90551618 քրեական գործի նյութերն ըստ մեղադրանքի Ռաֆիկ Սաշիկի Ստեփանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի առաջին մասով,

Պ ա ր զ ե ց ի՝

ՀՀ ՊՆ 20666 զորամասի խառն ականանետային մարտկոցի 2 բ-9 դասակի 1-ին հաշվարկի լիցքավորող, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ռաֆիկ Սաշիկի Ստեփանյանը, ստամոքսի շրջանում ունենալով ցավեր, նյարդայնացել է և նշված զորամասի շարահրապարակում 2018թ. մարտի 19-ին՝ ժամը 20:25-ի սահմաններում, ձախ նախաբազկի շրջանում սափրվելու համար նախատեսված մեկանգամյա օգտագործման ածելու սայրով, կտրվածքներ անելու եղանակով կատարել է անդամախեղում, ինչի արդյունքում ստացել է առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող՝ ձախ նախաբազկի ներսային շրջանի թվով 9 քերծվածք և տեղափոխվել ՀՀ ՊՆ 70011 զորամաս /Զանգեզուրի կայազորային զինվորական հոսպիտալ/, որը հանգեցրել է նրա կողմից զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Դեպքի առթիվ 2018թ. մարտի 29-ին ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի առաջին մասով հարուցվել է թիվ 90551618 քրեական գործը:

10.05.2018թ. Ռաֆիկ Սաշիկի Ստեփանյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի առաջին մասով մեղադրանք է առաջադրվել և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել հրամանատարության հսկողության հանձնելը:

Առաջադրված մեղադրանքում Ա.Լ.Խաչատրյանն իրեն մեղավոր չի ճանաչել և ցուցմունք է տվել այն մասին, որ 2018թ. փետրվարի 23-ին մարսողության և ստամոքսի հետ կապված առողջական խնդիրներ ունենալու պատճառով ՀՀ ՊՆ 20666 զորամասից ուղեգրվել է Զանգեզուրի կայազորային զինվորական հոսպիտալ, որտեղ բուժում է ստացել 21-ից 22 օր և մարտի 15-ին կամ 18-ին վերադարձել է նշված զորամաս: Նշել է, որ վերադառնալուց հետո նշված առողջական խնդիրները չեն բուժվել, և ինքը շարունակել է ունենալ առողջական

նույն խնդիրները: Բացի այդ, իր բնավորության պատճառով չի կարողացել շփվել համաձառայակիցների հետ: 2018թ. մարտի 19-ին, առողջական խնդիրների և հոգեբանական վիճակից ելնելով, զայրացել է չի հասկացել, թե իր հետ ինչ է կատարվել, գնացել է զորանոց, վերցրել սափրվելու համար նախատեսված ածելին, ջարդել գլխիկը և, վերցնելով դրա կտրող մասը՝ դուրս է եկել զորանոցից, գնացել շարահրապարակ և ձախ ձեռքի շրջանում կատարել թվով 9 կտրվածքներ:

Նկատի ունենալով, որ Ռաֆիկ Սաշիկի Ստեփանյանի մեղսունակության հարցը և կարևոր նշանակություն ունեցող այլ հանգամանքներ պարզելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի մասնագիտական հատուկ գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-245 և 248 հոդվածներով,

Որոշեցի՝

1.Վարույթումս քննվող թիվ 90551618 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ փորձագետներին:

2.Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա) Մեղադրյալ Ռաֆիկ Ստեփանյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հոգեկան հիվանդությամբ և երբվանից:

բ) Եթե Ռաֆիկ Ստեփանյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը գտնվում է արդյոք պատճառական կապի մեջ նրա կողմից 2018թ. մարտի 19-ին անդամախեղում կատարելու հետ:

գ) Եթե Ռաֆիկ Ստեփանյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ /քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակով/, ապա տվյալ հիվանդությունը կամ հիվանդագին վիճակը կամ խանգարումը 2018թ. մարտի 19-ին անդամախեղում կատարելու պահին նրան զրկել է իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ դրանք ղեկավարելու ընդունակությունից /հնարավորությունից/:

դ) Ռաֆիկ Ստեփանյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

ե) Եթե Ռաֆիկ Ստեփանյանն անմեղսունակ է, ապա նա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի, թե՝ ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

զ) Ռաֆիկ Ստեփանյանն իր առողջական վիճակով հասարակության համար վտանգավորություն ներկայացնում է, թե՝ ոչ:

է) Եթե Ռաֆիկ Ստեփանյանի մոտ առկա է հոգեկան հիվանդություն, ապա հնարավոր է, որ այն փոխանցված լինի ժառանգաբար, թե ոչ:

3.Փորձագետներին խնդրել պատասխանելու նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբուժական փորձագետի իրավասության մեջ և էական նշանակություն կարող են ունենալ քրեական գործի նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության համար:

4. Փորձաքննությանը ներկայացել Ռաֆիկ Սաշիկի Ստեփանյանին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում տրամադրել քրեական գործի նյութերը:

5.Փորձագետին նախազգուշացնել << քրեական օրենսգրքի 338 հոդվածով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Քննիչ՝ Մ.Հովհաննիսյան